ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ.Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 30.06.2020թ.),

Հ.Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 30.06.2020թ.),

քննելով Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ. ներկայացված (01.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/59 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.06.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գավառի քաղաքապետարանը 15.06.2020 թվականին հայտարարել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցում, Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

«Նիկոլ Դուման» ԱԿ-ն ներկայացրել է բանկային երաշխիք, որում նշված է, որ ներկայացվում է մինչև 5 տոկոսի չափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հայտի ապահովումը բանկային երաշխիքի տեսքով ներկայացվելու դեպքում պետք է լինի հայտով ներկայացված գումարի 5 տոկոսի չափով: Օրենսդիրը սահմանել է նաև հնարավորություն հայտի ապահովման չափը 5 տոկոսից ավելի ներկայացնելու դեպքում, որի դեպքում հայտը ենթակա չէ մերժման, այսինքն մնացած բոլոր դեպքերում երբ գործ ունենք հայտի ապահովման չափը 5 տոկոսից պակաս լինելու հետ, ապա այն հիմք է հայտի մերժման համար: Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում նշված է, որ դրա չափը կազմում է մինչև 5 տոկոս, սակայն մինչև 5 տոկոսը դեռ չի նշանակում, որ այն ներկայացված է հենց 5 տոկոսի չափով, այն իրենից կարող է ենթադրել նաև 3 տոկոս: Ուստի նշված պարագայում հնարավոր չէ փաստել հրավերի պահանջներին համապատասխան բանկային երաշխիքի առկայությունը, ուստի այն չի համապատասխանում հրավերի պահանջներին և ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Գավառի քաղաքապետարանին 15.06.2020 թվականին հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին՝ կայացնելու «Նիկոլ Դուման» ԱԿ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը»:

Ընկերությունը 03.07.2020թ. ներկայացրել է վերը շարադրված բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Գավառի քաղաքապետարանը 15.06.2020 թվականին հայտարարել է ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցում, Գավառի քաղաքապետարանի կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի հանձնաժողովը հայտերի բացման նիստում որոշում կայացրեց Կարգի 41-րդ կետի հիմքով 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերությանը հնարավորություն տալ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնելու երաշխիքի բնօրինակը: Հիմք՝ 22.06.2020 թվականի թիվ 2 արձանագրություն:

Ընթացակարգի հանձնաժողովը որոշեց «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերին պահանջներին չհամապատասխանելու հիմքով Հիմք՝ 24.06.2020 թվականի թիվ 3 արձանագրություն:

Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

«Նիկոլ Դուման» ԱԿ-ն ներկայացրել է բանկային երաշխիք, որում նշված է, որ ներկայացվում է մինչև 5 տոկոսի չափով:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (…):

«ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Սույնի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցը հայտի ապահովումը կարող է ներկայացնել երկու եղանակով կամ կանխիկ փողի տեսքով կամ բանկային երաշխիքով: Այն դեպքերում երբ հայտի ապահովումը ներկայացված չէ, ապա հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը հնարավորություն տալով մասնակցին շտկելու արձանագրված անահմապատասխանությունը, այսինքն ներկայացնելու հայտի ապահովումը: Ընդ որում Օրենսդիրը չի սահմանել այնպիսի դրույթ, որով հանձնաժողովին հնարավորություն ընձեռնի անհամապատասխանության շտկման առաջարկով մասնակցից պահանջել իր

նախաընտրած ձևի հայտի ապահովում, այլ նախատեսել է միայն հայտի ապահովման ներկայացման մեկ աշխատանքային օրյա ժամկետ տրամադրելու հնարավորությունը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ բողոքարկվող ընթացակարգի շրջանակում «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում ընդհանրապես բացակայում է հայտի ապահովումը և հանձնաժողովը նիստը կասեցնելով պետք է հնարավորություն տար շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այսինքն ներկայացնելու հայտի ապահովումը, սակայն չգիտես ինչու հանձնաժողովը «ԱԿՈՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունից պահանջել է ներկայացնելու երաշխիքի բնօրինակը սահմանափակելով մասնակցի իրավունքները և ստեղծելով անհարկի խոչընդոտներ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերությունը ներկայացրել էր ամենացածր գինը, ուստի հանձնաժողովի կողմից եթե պահպանվեին օրենսդրական պահանջները և խտրական, հակաօրինական գործողությամբ չպահանջվեր երաշխիքի բնօրինակը, այլ հայտի ապահովում մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ապա մասնակիցը լիարժեք կկարողանար իրացներ իր իրավունքները: Ուստի ամփոփելով գտնում եմ, որ «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերության իրավունքները սահմանփակվել են հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա

հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հայտի ապահովումը բանկային երաշխիքի տեսքով ներկայացվելու դեպքում պետք է լինի հայտով ներկայացված գումարի 5 տոկոսի չափով: Օրենսդիրը սահմանել է նաև հնարավորություն հայտի ապահովման չափը 5 տոկոսից ավելի ներկայացնելու դեպքում, որի դեպքում հայտը ենթակա չէ մերժման, այինքն մնացած բոլոր դեպքերում երբ գործ ունենք հայտի ապահովման չափը 5 տոկոսից պակաս լինելու հետ, ապա այն հիմք է հայտի մերժման համար:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքում նշված է, որ դրա չափը կազմում է մինչև 5 տոկոս, սակայն մինչև 5 տոկոսը դեռ չի նշանակում, որ այն ներկայացված է հենց 5 տոկոսի չափով, այն իրենից կարող է ենթադրել նաև 3 տոկոս:

Ուստի նշված պարագայում հնարավոր չէ փաստել հրավերի պահանջներին համապատասխան բանկային երաշխիքի առկայությունը, ուստի այն չի համապատասխանում հրավերի պահանջներին և ենթակա է մերժման: Պետք է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ մինչև 5 տոկոս երաշխիքը ստեղծում է անորոշություն և փաստել այն մասին, որ հայտի ապահովումը տրված է հստակ 5 տոկոսով անհնարին է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել թիվ «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին՝ կայացնելու հետևյալ որոշումները.

1.Հայտերի բացման նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «Ակորդ գրուպ» ՍՊ ընկերությանը առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացնել հայտի ապահովում,

2. «Նիկոլ Դուման» ԱԿ հայտը գնահատել անբավարար և մերժել,

3. Վերացնել 24.06.2020 թվականի N 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ընկերությունը, ի լրումն վերը շարադրված բողոքի, հայտնել է հետևյալը.

«Ի լրումն բողոքի ցանկանում եմ ներկայացնել ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստը կասեցնելու վերաբերյալ ծանուցումը, որտեղ նույնպես արձանագրված անհամապատասխանության շտկման համար մատնանշել են, ոչ թե հայտի ապահովման ներկայացման հանգամանքը, այլ երաշխիքի բնօրինակի, ավելին դրա ներկայացման պահանջը սահմանվել է մինչև 23.06.2020 թվականի 17:00:

Ի դեպ ուզում եմ հայտնել նաև, որ հանձնաժողովը շտկման հնարավորություն տվել է մինչև հաջորդ օրվա 17:00, որի պարագայում ըստ երևույթին հանձնաժողովը առաջնորդվել է այն կարգավորմամբ, որ եթե բանկային երաշխիքը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, ապա մինչ հաջորդ օրը 17:00 ներկայացվում է բանկային երաշխիքի բնօրինակը, որը անհամապատասխանության շտկման ինստիտուտի հետ կապ չունի:

Օրինակ. եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացնում է բանկային երաշխիքի էլեկտրոնային եղանակով, ապա մինչև հաջորդ օրը 17:00 ներկայացնում է բնօրինակը, որի դեպքում հայտերի բացման նիստը չի կասեցվում: Իսկ այն դեպքերում երբ արձանագրվում է անհամապատասխանություն, ապա հայտերի բացման նիստը կասեցվում է մեկ աշխատանքային օրով և մասնակցին տրվում շտկման հնարավորություն այդ նույն ժամանակահատվածում, այլ ոչ թե մինչև 17:00:

Ուստի՝ հաշվի առնելով նշվածը և բողոքի ուղղված տարբերակով ներկայացված փաստական և իրավական հիմքերը, խնդրում եմ բողոքը բավարարել ամբողջությամբ»:

«Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գավառի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.07.2020թ. թիվ Մ-424 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գավառի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման արդյունքում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները և հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.05.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/55 նախադեպային որոշումը, «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատվել է անբավարար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/59 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գավառի քաղաքապետարանը կանգառների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն և «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայել է հրավերի հավելված 3-ը (հայտի ապահովում):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության

04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է, հիմք ընդունելով հրավերի փաթեթի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետը, 8.9 և 8.10 կետերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնել երաշխիքի բնօրինակը մինչև 23.06.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

5. Նույն արձանագրությամբ որոշվել է հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունիս 23-ին, ժամը 17:00-ին՝ ք. Գավառ, Գր. Լուսավորիչի 12, երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

7. «Նիկոլ Դուման» ԱԿ-ի Ընթացակագին ներկայացրած գնայի առաջարկի ընդհանուր գինը կազմել է 31 800 000 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

8. «Նիկոլ Դուման» ԱԿ-ն Ընթացակագի մասնակցության հայտով ներկայացրել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով՝ տրված «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, որի 2-րդ կետում որպես հայտի ապահովման չափ նշված է մինչև 1 590 000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, 03.07.2020թ. ներկայացված բողոքի ուղղված տարբերակը, 10.07.2020թ. ներկայացված բողոքի լրացումը, Գավառի քաղաքապետարանի դիրքորոշումը, «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ ***հայտ ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով սպանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) **գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ **հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը,** կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա **հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: **Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է**, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-

րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, **<u>որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:</u>**

Այսպիսով՝ Գավառի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կանգառների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ն և «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայել է հրավերի հավելված 3-ը (հայտի ապահովում):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է, հիմք ընդունելով հրավերի փաթեթի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետը, 8.9 և 8.10 կետերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնել երաշխիքի բնօրինակը մինչև 23.06.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն արձանագրությամբ որոշվել է հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունիս 23-ին, ժամը 17:00-ին՝ ք. Գավառ, Գր. Լուսավորիչի 12, երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նիկոլ Դուման» ԱԿ-ն:

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի Ընթացակագին ներկայացրած գնայի առաջարկի ընդհանուր գինը կազմել է 31 800 000 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

«Նիկոլ Դուման» ԱԿ-ն Ընթացակագի մասնակցության հայտով ներկայացրել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով՝ տրված «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, որի 2-րդ կետում որպես հայտի ապահովման չափ նշված է մինչև 1 590 000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար):

Այսպիսով՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 22.06.2020թ. որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ՝ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, միևնույն ժամանակ սահմանելով երաշխիքի բնօրինակը մինչև 23.06.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն ներկայացնելու պահանջ: Մինչդեռ արձանագրում եմ, որ համաձայն Կարգի 41-րդ կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասն իր հերթին սահմանում է, որ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը, այսինքն՝ տվյալ դեպքում մեկ աշխատանքային օրը իր մեջ ներառում է նաև գնահատող հանձնաժողովի կողմից որպես անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված վերջնաժամկետը՝ 23.06.2020թ. ժամը 17:00-ն:

Ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը չի կիրառվել, որի արդյունքում Ընկերությունը զրկվել է Կարգով նախատեսված ժամկետի ընթացքում անհամապատասխանությունը շտկելու իր իրավունքից:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2020թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետին, որի համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նիկոլ Դուման» ԱԿ-ն՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Նիկոլ Դուման» ԱԿ-ն Ընթացակագում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից այն պայմաններում, երբ վերջինիս կողմից Ընթացակարգին ներկայացրած

գնայի առաջարկի ընդհանուր գինը կազմել է 31 800 000 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքի 2-րդ կետում հայտի ապահովման չափ նշված է մինչև 1 590 000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ: Սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով հստակ սահմանվում է, որ հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, մինչդեռ «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքում հայտի ապահովման չափ նշված է մինչև 1 590 000, այսինքն համաձայն բանկային երշխիքում նշվածի՝ այն կարող է նաև նվազ լինել 1 590 000 ՀՀ դրամից, մինչդեռ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին. տվյալ դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով Ընկերության ներկայացրած գնային առաջարկի ընդհանուր գինը (31 800 000 Հ դրամ) և բանկային երաշխիքով ներկայացված հայտի ապահովման չափը (մինչև 1 590 000 ՀՀ դրամ), արձանագրում է որպես անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

Այսպիսով՝ հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արձանագրված վերոշարադրված անհամապատասխանությունները՝ գտնում եմ, որ «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի և «Նիկոլ Դուման» ԱԿ-ի մասնակցության հայտերում առկա անհամապատասխանությունների մասով անհրաժեշտ է, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, արձանագրված անհամապատասխանությունների մասով կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթը:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված՝ թիվ «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին պարտավորեցնելու «Նիկոլ Դուման» ԱԿ հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշում կայացնելու պահանջին, ապա սույն մասով ևս մեկ անգամ անհրաժեշտ եմ գտնում արձանագրել, որ տվյալ դեպքում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը, հետևաբար վերոնշված պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1.1 Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 22.06.2020թ. թիվ 2 արձանագրությունը, բացառությամբ 1-ին կետի, 24.06.2020թ. թիվ 3 արձանագրությունը:

1.2 սույն որոշման հիմնավորման շրջանակներում «Ակորդ գրուպ» ՍՊԸ-ի և «Նիկոլ Դուման» ԱԿ-ի ներկայացրած հայտի մասով կիրառել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները:

2. Նիկոլ Դուման» ԱԿ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով բողոքի պահանջը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**